

<b>Եկամուտների կազմը և ԸՊԵ գործակցին մասնակցելու առավելագույն կշիռները</b>	
<b>1.</b>	<b>Առաջնային եկամուտներ.</b>
<b>1.1</b>	Վարկառուի/համավարկառուի մասնագիտական հմտությունների և կարողությունների վրա հիմնված հիմնական աշխատաժամանակում ստացվող աշխատավարձը/եկամուտ
<b>1.2</b>	Սեփական ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող համապատասխան փաստաթղթերով հիմնավորված եկամուտը (շահույթը)
	<b>Երկրորդային ընդհանրացված մատչելի բնակարան ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում</b> Սեփական ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող համապատասխան փաստաթղթերով հիմնավորված եկամուտը (շահույթը), բացառությամբ այն դեպքերի երբ <ol style="list-style-type: none"> <li>1. այն գործում է 1 տարուց պակաս,</li> <li>2. վերջին 1 տարում 2 և ավելի ամիս ունեցել է զրոյական շրջանառություն, (հասույթ)</li> <li>3. առկա է հարկերի գծով կրեդիտորական պարտք</li> </ol> չի ներկայացվել ձեռնարկատիրական գործունեության վերլուծության համար անհրաժեշտ ամբողջական տեղեկություն
<b>2.</b>	<b>Երկրորդային եկամուտներ</b>
<b>2.1</b>	Վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն 12 ամիս առաջ՝ օրենքով սահմանված կարգով կնքված վարձակալության պայմանագիր:
	<b>Բանկի ռեսուրսի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b> Վարձակալությունից ստացված եկամուտ, որը ստացվել է վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն 3 ամիսների ընթացքում և հիմնավորված է օրենքով սահմանված կարգով կնքված վարձակալության պայմանագր(եր)ով <sup>1</sup> :
<b>2.2</b>	պետական գանձապետական պարտատուներում, ՀՀ ԿԲ արժեթղթերում, այլ արժեթղթերում ներդրումներից ստացված եկամուտները՝ վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում:
<b>2.3</b>	առնվազն մեկ տարվա ընթացքում վճարովի աշխատանքի կատարումը կամ ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտը:
<b>2.4</b>	վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում ստացված փոխանցումները, եթե դրանք ստացվել են նվազագույնը 6 անգամ (այս դեպքում պարբերական են համարվում այն փոխանցումները, որոնք կատարվել են վերջին 12 ամիսների ընթացքում ամսենամսյա կամ երկամսյա հաճախականությամբ)

<sup>1</sup> Եթե վարձակալության պայմանագրով սահմանված վճարը տարբերվում է փաստացի վճարվող գումարից, ապա ընդունվում անկախ գնահատող ընկերության կողմից գնահատված վարձակալության վճարը:



2.5	<p>կենսաթոշակը՝ երկարամյա ծառայության (&lt;&lt; ԿԱ ոստիկանության, &lt;&lt; պաշտպանության նախարարության, քրեակատարողական հիմնարկների և այլ համապատասխան մարմինների աշխատակիցների, մանկավարժների, դատավորների և այլն), կերակրողին կորցնելու և այլն (բացառությամբ տարիքային կենսաթոշակի)</p>
2.6	<p><b>1) Բանկի ռեսուրսով և Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b> ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող շահույթը/եկամուտը, որը հիմնավորված է ներքին հաշվառման փաստաթղթերով (այն դեպքում, եթե եկամուտը ստացվում է հարկային դաշտում ընդհանրապես չգրանցված բիզնեսից, ապա այն կարող է հաշվի առնվել 200,000 &lt;&lt; դրամը ամսական կտրվածքով չգերազանցելու դեպքում)</p> <p><b>2) Երիտասարդ ընտանիքին մարչելի բնակարան ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b> չի դիտարկվում</p>
2.7	<p><b>1) Բանկի ռեսուրսով և Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b> պարգևավճարները՝ եթե դրանք կրում են պարբերական բնույթ (առնվազն եռամսյակային), վճարվել են վերջին մեկ տարվա ընթացքում և պայմանավորված չեն գործատուի գործունեության արդյունքներով</p> <p><b>2) Երիտասարդ ընտանիքին մարչելի բնակարան ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b> գործատուի կողմից վճարվող այլ տեսակի վճարները (աշխատավարձի չգրանցված մաս, հավելավճար) եկամտում կարելի է ներառել առավելագույնը վարկառուի/համավարկառուի զուտ աշխատավարձի չափով, սակայն ոչ ավել քան 200 000 &lt;&lt; դրամը</p>
2.8	<p>պարգևավճարները՝ եթե դրանք կրում են պարբերական բնույթ, վճարվել են վերջին մեկ տարվա ընթացքում և պայմանավորված չեն գործատուի գործունեության արդյունքներով</p>
2.9	<p><b>Բանկի ռեսուրսով և Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b> շահաբաժինները, որոնք ունեն պարբերական բնույթ և վճարումը կատարվել է հայտարարված շահույթից</p> <p><b>Երիտասարդ ընտանիքին մարչելի բնակարան ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b> շահաբաժինները, որոնք ունեն պարբերական բնույթ և վճարումը կատարվել է հայտարարված շահույթից</p>
2.10	<p>այլ եկամուտներ, որոնք նշված չեն 2.1-2.11-րդ կետերում, սակայն Բանկի համար ընդունելի</p>

ք. Երևան, Կարդանանց 13, 010 59 33 33, anelik@anelik.am